

միկոնեից Վարդան ազդ առնել ուխտապահացն, որք յաղագս տաւնի աւուրցն երթեալք էին² ի տունս իւրեանց՝ կատարել գտաւնն զատկի առ ընտանիս իւրեանց, եթէ «Գունդ բազում հասեալ գայ, բերելով աստուածասիրացն պսակս երկնաւորս. արդ՝ որ ոք ցանկայ առնուլ՝ աճապարեցէ՛ք, զի մի՛ վրիպեսցի որ եւ զղջանայցէ: 4 Եւ եթէ որ խորհի այլազգ ինչ, որպէս եւ այլքն, որք խոտորեցան զկնի սատանայի՝ դադարեալ հանգիցէ՝ ուր եւ թուեսցի հաճոյ ումեք: 5 Զանգի ոչ որ պսակի ընդ ընկերաց իւրոց՝ թէ ոչ տանջի. այլ իւրաքանչիւր որ անձին իւրում գանձէ զհողեղէնսս եւ գլաւիտեւնականսն»:

6 Եւ զայս լուեալ ճշմարտասիրացն եւ զանմահութիւն սիրողացն՝ դորդեցան, ելեւելս առնելով զմիմեամբք, որպէս հաւտք, որ ի ձայն աղի փութայցեն զկնի հովուացն: 7 Թուի ինձ³, ոչ այնպէս ընթացեալ երագունսս Աբրահամայ ի տանել զորթն հրեշտակացն, որք խոստացան տալ նմա զորդին՝ որպէս ճեպեալ ընթանային զաւրքն Յայոց զհետ երանելոյն Վարդանայ սպարապետին Յայոց, երթալ յընթրիսն Զրիստոսի եւ ուտել զհաց հրեշտակաց:

8 Եւ այսպէս եղեալք ըստ նմանութեան սուրբ առաքելոցն ամենեքեան մի սիրտ եւ մի հոգի՝ առաքել երանելի սպարապետն Յայոց Վարդան, միաբանութեամբ աւագանւոյն որ ընդ նմայն էին, սեպուհ մի յազգէն Ամատունեաց, որում անուն էր Առանձար, իբրեւ երեք հարիւր հեծելով՝ երթալ լրտեսել զբազմութիւն զաւրացն Պարսից, եւ տալ գրգիռս, եթէ հնար իցէ⁴, առ ի փութապէս, ասէ, զալ բերել մեզ զպսակս արքայութեան, զոր ի ձեռն նոցա պարգեւէ մեզ Փրկիչն Զրիստոս, յաւիտենից բարութեանցն տուիչ: 9 Եւ երթեալ Առանձար եւ գունդն որ ընդ նմա՝ այնպէս շնորհեցաւ նմա յԱստուծոյ, որպէս զի տեսին զբանակն Պարսից. եւ զհզար վերջապահ թելով միով անկեալ՝ զբազումս հանէին ընդ սուր, եւ զայլս փախստականս արարեալ արկանէին ի զաւրն Պարսից. եւ ինքեանք դարձեալ ողջանդամք հասանէին ուրախութեամբ ի գունդն Յայոց եւ պատմէին նոցա զԱստուծոյ զաւրութիւնն, զոր յաջողեաց նոցա Փրկիչն:

10 Եւ լուեալ երանելոյ⁵ սպարապետին Վարդանայ հանդերձ միահամուռ զաւրաւքն՝ գոհանային եւ աւրինէին զամենահզաւրն Աստուած: 11 Պատմէին եւ վասն զաւրագլխացն, թէ Մուշկանն Նիւսաւաւուրտ եւ

1 2. զարւանդ

2 2. երթեալ էին

3 2. թուի ինչ

4 2. թէ հնար իցէ

5 SS. երանելի